ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ՝ «ՎԱՐԴԱՆ ԿՈԼՅԱՅԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ, ՆՈՆԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ, ԳԵՎՈՐԳ ԿՈԼՅԱՅԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ, ՋՈՒԼԵՏԱ ԺՈՐԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ԿՈԼՅԱ ԳԵՎՈՐԳԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ, ՍՊԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՆԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ, ՆՈՆԱ ՍՊԱՐՏԱԿԻ ՂՈՒԿԱՍ-ՅԱՆԻ, ՄԱՆՅԱ ՎԱՐԴԱՆԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ, ՇՈՒՇԱՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԵԳԱՆՅԱՆԻ, ԱՆՆԱ ՎԱՐԴԱՆԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ, ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ, «ԱՆԲԵՐԴ»/«ԱԼԵՔՊՈԼ» ՍՊԸ, «ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ ԲԻԶՆԵՍ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ, «Ա.Ն.Մ.Ա.» ՍՊԸ, «ՂՈՒԿԱՍՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ»/«ՉԱԴՐԵՆՑ» ՍՊԸ, «ԿՈԼՅԱ ՂՈՒԿԱՍՅԱՆ» ԱՁ, «ՄԱՆՅԱ ՂՈՒԿԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆԻ» ԱՁ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 12-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, ՎԵՐՋԻՆԻՍ ՀԵՏ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ ՓՈԽԿԱ-ՊԱԿՑՎԱԾ՝ ՆՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2 ԵՎ 3-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱ-ՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 5-րդ կետերի՝ Սահմանադրական դատարանի դատա-վոր Հրայր Թովմասյանի մասնակցությունը Սահմանադրական դատարանում «Վարդան Կոլյայի Ղուկասյանի, Նոնա Սերյոժայի Ղուկասյանի, Գևորգ Կոլյայի Ղուկասյանի, Ջուլետա Ժորայի Հարությունյանի, Կոլյա Գևորգի Ղուկասյանի, Սպարտակ Վարդանի Ղուկասյանի, Նոնա Սպարտակի Ղուկասյանի, Մանյա Վարդանի Ղուկասյանի, Շուշա-նիկ Հովհաննեսի Եգանյանի, Աննա Վարդանի Ղուկասյանի, Մարիամ Վարդանի Ղուկասյանի, «Անբերդ»/«Ալեքպոլ» ՍՊԸ, «Ալեքսանդրապոլ Բիզնես Կենտրոն» ՍՊԸ, «Ա.Ն.Մ.Ա.» ՍՊԸ, «Ղուկասյան Եղբայրներ»/«Չադրենց» ՍՊԸ, «Կոլյա Ղուկասյան» ԱՁ, «Մանյա Ղուկասյան Վարդանի» ԱՁ դիմումի հիման վրա՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի 12-րդ հոդվածի, վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես

նաև 7-րդ հոդվածի 2 և 3-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությանն անհնարին է, քանի որ նա կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի նկատմամբ, ինչպես նաև նա գիտի կամ ողջամտորեն պետք է իմանա, որ ինքն անձամբ և իր մերձավոր ազգականը տնտեսական շահ ունեն՝ կապված վեճի էության հետ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

3 հունիսի 2025 թվականի
ՍԴԱՈ-91